Կ Ա Ր Ծ Ի Ք

Նաիրա Ալբերտի Սարհատյանի «Երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության:

21-րդ դարում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, ռազմա-քաղաքական, մշակութային ժամանակակից զարգացումները որպես օրինաչափություն, ուղղակի անդրադառնում են երկրների տնտեսության, կենսակերպի, հետևապես նաև դրանցում ապրող մարդկանց ընտանիքների սոցիալ-հոգեբանական նկարագրերի վրա: Այս տեսանկյունից՝ ընտանիքը որպես սոցիալ-հոգեբանական կառուցվածք, ենթարկվում է նորովի փոփոխությունների: Ձևավորվում են նոր մտածողություն, խնդիրների լուծման նորովի մոտեցումներ: Դա բացատրվում է նաև ժամանակակից երիտասարդների և աղջիկների կրթական մակարդակով, ամուսնության և համատեղ կյանքի նկատմամբ նորագույն մոդելների ներմուծման իրողությամբ(քաղքցիական, ազգային, ավանդական և այլ): Դրական զարգացումների ֆոնին դիտարկվում են նաև բազմաթիվ բացասական երևույթներ, որոնք քողարկված կամ ակնհայտ կերպով տեղ են գտնում ամուսինների հարաբերություններում և դրսևորվում որպես ամուսինների միջև ձևավորվող սոցիալ-հոգեբանական խնդիրներ: Ընտանիքը հանդիսանալով անձի բազմակողմանի ապահովության, անվտանգության միջավայր, միևնույն ժամանակ նրանում գոյություն ունեցող ամեն տեսակ կնճռոտ խնդիրներ, որոնք իրենց կնիքն են թողում ամուսինների և մյուս անձանց ընդհանուր և հոգեկան առողջության բնութագրերի վրա: Այս տեսանկյունից, ատենախոսական աշխատանքը առաջադրված խնդիրների ուղղվածությամբ և դրանց լուծման մեթոդաբանությոմբ արդիական է, ունի կարևոր գիտական և կիրառական նշանակություն:

Նաիրա Ալբերտի Սարհատյանի ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու տեսական գլուխներից և երիտասարդ ընտանիքների կոնֆլիկտների առանձնահատկությունների հետազոտության երրորդ գլխից: Ընդհանուր

ծավալը կազմում է 130 էջ; Հետազոտության արդյունքների սոցիալ-հոգեբանական վերլուծությունները ուղեկցվում են 14 աղյուսակների և 2 նկարների ձևով:

Ն. Սարհատյանի ատենախոսական աշխատանքի ներածական բաժնում ներկայացվում են թեմայի արդիականության, գիտական կարևորության հիմնավորումները, թեմայի իրականացման ռազմավարությունը, գիտական ձևակերպումների համառոտ բովանդակությունը, հետազոտությունների կազմակերպման մեթոդաբանությունը: Պաշտպանության ներկայացվող աշխատանքի դրույթների գիտական ձևակերպումները արված են գրագետ գիտական լեզվով:

Ատենախոսական աշխատանքի առաջին «Ամուսնության և ընտանիքի զարգացման նկարագրությունը հասարակության պատմության ընթացքում» գլուխը նվիրված է ընտանեկան հարաբերությունների կառուցման, դրանց զարգացման սոցիալ-պատմական խնդիրների հոգեբանական վերլուծություններին, տարբեր տեսությունների համեմատական գործընթացներին, դրանց գիտական մեկնաբանումներին: Իրականացված տեսական վերլուծություններն ու էքսպերիմենտալ հետազոտությունները հիմնավորվում են ճանաչված գիտնականների(Ս. Ա. Սեդրակյան, Ն. Հարությունյան, Ա. Ստեփանյան, Ա. Վ. Քոլյան, Ա. Ն. Օբոզովա, Օ. Ա. Կարաբանովա Տ. Վ. Անդրեեվա, Յու. Ե. Ալյոշինա, Ե. Գ. Էյդեմիլներ, Տ. Լ. Ռոմանովա, Վ. Դուժինին, Կ. Ռոջերս և այլոք) առաջավոր գաղափարների լուսաբանման և դրանց ուղորդությամբ իրականացվող աշխատանքների սոցիալ-հոգեբանական բնութագրերի վերլուծականներով: Հոգեբանական վերլուծություններում վեր են հանվում հիմնախնդրի ուսումնասիրվածության գիտական ուղղությունները (էվոլյուցիոն, գործառութային, ծագումնաբանական, գիտական և այլն), այնուհետև հիմնավորվում ենքննարկվող գաղափարների օգտաբործման գիտական նպատակահարմարության լուսաբանումները տեսական խնդիրնեի լուծման գործում: Վերլուծության են ենթարկվե ամուսնության և ընտանիքի պատմական տիպերը, նրանց սոոցիալ-հոգեբանական առանձնահատկություններն ու դրանց նկատմամբ ժամանակակից մոտեցումները: Անդրադարձ է արվում ժամանակակից հեղինակների սահմանումներին, ընտանեկան միջավայրում անձի դերերի ու դիրքերի ձևավորման առանձնահատկություններին,

ամուսնական ճգնաժամերի առաջացման պայմաններին, դրանց գործառութային և սոցիալ-հոգեբանական խնդիրների մեկնաբանումներին:

Ատենախոսական աշխատանքի երկրորդ գլխում ուսումնասիրվում են «Ընտանեկան ճգնաժամերի սոցիալ-հոգեբանական հիմնահարցերի ժամանակակից դրվածքն» ու գոյություն ունեցող գաղափարների մեկնաբանման խնդիրները: Հեղինակը մանրամասն վերլուծությունների շնորհիվ համակարգել է ժամանակակից ամուսնական զույգերի, ընտանեկան կյանքին պատրաստվածության, համոզմունքների, պահանջմունքների հոգեբանական մեխանիզմները, ընտանիքում ձևավորվող կոնֆլիկտների սոցիալ հոգեբանական առանձնահատկությունները: Ն.Սարհատյանի տեսական վերլուծություններում հատուկ ուշադրություն է դարձվում հոգեվերլուծական, ինդիվիդուալիստական, հոգեդինամիկ, գործառնական և սոցիալական տեսություններին, որոնց շնորհիվ ամբողջականացվում են ընտանեկան ճգնաժամերի արդյունքում ամուսնալուծությունների առաջացման սոցիալ հոգեբանական մեխանիզմների ճանաչողական կողմերը: Մեկնաբանվում են նաև կոնֆլիկտների առջացման սոցիալ-հոգեբանական մեխանիմները, դրանց տրանսֆորմացիաներն ու ձևափոխությունները: Այնուհետև հեղինակը անդրադառնում է երիտասարդ ընտանիքներում լատենդ, միջնորդավորված կոնֆլիկտների գեներացման մեխանիզմներին, դրանց պատճառների սոցիալ-հոգեբանական խնդիրներին: Անդրադարձ է արվում նաև ամուսնական կյանքի տարբեր փուլերին, դրանց բնորոշ դժվարությունների, ճգնաժամային շրջանների սոցիալ-հոգեբանական բնութագրերի նկարագրմանը: Ճգնաժամերի փուլայնությունը կապվում է նաև առաջին երեխայի ծնվելու հետ: Դրանցում ներառվում են երեխայի խնամքի ապահովման հմտությունների պակասը, ժամանակի բաշխման անկարողությունները, տնտեսության և միջանձնային հարաբերությունների կառավարման դժվարությունները և բազմաթիվ այլ հանգամանքներ:

Զույգերի համատեղ կյանքի մեկնաբանություններում հեղինակի կողմից կարևոր վերլուծություններ են արվում նաև ընտանեկան կոնֆլիկտներին նպաստող նախնական դիրքորոշումները, կարծրատիպերն ու հնացած մոդելների գերակայությունը: Կոնֆլիկտների առաջաման պատճառներից մեկն էլ հեղինակը համարում է

ամուսինների կողմից իրենց ծնողներից բազմակողմանի կախվածությունը, ընտանեկան մոդելների, դերերի վերաբերյալ հակադիր պատկերացումները: Ատենախոսական աշխատանքի երկու տեսական գլուխները ամփոփվում են համապատասխան եզրակացություններով, որոնք ընգծում են տեսական խնդիրների հաջող լուծման ավարտը:

Նաիրա Սարհատյանի ատենախոսական աշխատանքի երրորդ «Երիտասարդ ընտանիքների կոնֆլիկտների առանձնահատկությունների փորձարարական հետազոտություն և վերլուծություն» հիմնական գլխուխը իր մեջ ներառում է բուն հետազոտական աշխատանքների իրականացման ռազմավարությունը, կազմակերպչական պահանջները, համակազմն ու մեթոդաբանական հնարքները, ինչպես նաև ստացված արդյունքների սոցիալ-հոգեբանական վերլուծությունների բնութագրերը: Հետազոտական աշխատանքներն իրականացվել են (2016-2020թթ), երեք փուլերով, որոնցում ընդգրկված են եղել 240 անձիք: Հետազոտություններում կիրառվել են նաև առաջադրված խնդիրների լուծման 7 թեստային մեթոդներ, որոնց կիրառման տեխնիկան և ստացված արդյունքների վերլուծության մեկնաբանումները ներկայացված են նաև կոնկրետ երևույթների հետազոտման ընթացքում:

Մասնավորապես հետազոտություններում բացահայտվել են ամուսնական զույգերի կոնֆլիկտային վարքի նկատմամբ անձի նախատրամադրվածությունը, որը դիտարկվել է մի քանի տեսանկյուններից, որպես ընդհանուր դիրքորոշում, ինչպես իրադրական, այնպես էլ որպես անձի կոնֆլիկտների նկատմամբ նախատրամադրվածություն: հետազոտվել են նաև կողմերի ամուսնությունից բավարարվածության մակարդակը, որպես կոնֆլիկտների նկատմամբ նրանց սոցիալ-հոգեբանական հարթակ: Կոնֆլիկտների առաջացման նախադրյալների բացահայտման համար հետազոտվել են նաև ամուսինների սոցիալ-հոգեբանական համատեղելիության աստիճանը: Հետազոտվել են նաև զույգերի ընտանեկան դերերի և դրանցում ամուսինների գործառույթների իրականացման լիարժեքությունը, դերերի բաշխման վերաբերյալ նրանց պատկերացումներն ու ընտանիքում դրանց դրվածքի առանձնահատկությունները: Հետազոտություններում տեղ են գտել նաև ամուսնական

կյանքում զույգերի դերային սպասելիքներն ու հավակնությունների մակարդակը, այդ թվում նաև ընտանեկան արժեքների համակարգության (ընտանիքին նվիրվածության, սեռական կյանքի, ամուսինների ընդհանրությունների, ծնոզական պարտականությունների, հետաքրքրությունների, արտաքին գրավչության և այլն) արտահայտվածությունն ու դրանց նկատմամբ ունեցած գնահատականները: Այնուհետև ըստ հետազոտության իրականացման տրամաբանության, կազմակերպվել են հիմնական հետազոտության գործընթացները(կոնֆլիկտներն ու դրանց պատճառները, անձնային առանձնահատկությունները և այլն):

Հետազոտության արդյունքները քննարկվում են մեթոդ առ մեթոդ՝ ըստ գործոնային և դրանց գիտական նշանակելիության, ամուսինների միջև առաջացած կոնֆլիկտների, ինչպես նաև դրանց ազդեցության կարևորության: Հետազոտության արդյունքների միջմեթոդական վերլուծությունները ներկայացնում են նաև առաջադրված խնդիրների լուծման ընթացքը, հետևությունների, արված եզրակացումների գիտական հիմնավորումները: Արդյունքների վերլուծությունները աչքի են ընկնում գործոնների դիտարկման նրբանկատությամբ և բազմակողմանի արժեվորման պրոֆեսիոնալիզմով, որոնց հավաստիությունն ու ապացուսողականությունը ամրակայվում է կիրառված մաթ ապարատի շնորհիվ: Հետազոտությունների արդյունքները ըստ կատարված աշխատանքների հերթականության և առաջնության արտացոլվում են աղյուսակների, գծագրերի ու դիագրամների տեսքով, որոնք իրենց ներկայացման բովանդակությամբ արժեվորում և գիտական կարևոր նշանակություն են ապահովում ատենախոսական աշխատանքի բովանդակությանը: Հետազոտությունն ավարտվում է հիմնարար եզրակացություններով, գործնական առաջարկություններով և հանձնարարականներով:

Ատենախոսական աշխատանքին կից ներկայացվող սեղմագիրը իր կառուցվածքային և բովանդակային բնութագրերով, հասկացությունների ձևակերպման պահանջներով, գիտական խնդիրների մեկնաբանման հնարավորություններով համապատասխանում է ատենախոսության մեջ լուծված խնդիրների լուսաբանման բոլոր պահանջներին: Չնայած որ աշխատանքը իրականացվել է ատենախոսություններին

ներկայացվող գիտական պահանջների շրջանակներում, այնուամենայնիվ ունենք որոշ դիտողություններ, որոնք կուզեինք նշել:

1. Ներկայացված չեն ամուսնությունների և ամուսնալուծությունների ազգային վիճակագրական տվյալների աղբյուրներն ու դրանց մյուս պարամետրերը: Ներկայացված չեն նաև ընտանեկան կոնֆլիկտների բնույթը, դրանց սոցիա-հոգեբանական գենեզիսը: Ինչն է դիտարկվում որպես կոնֆլիկտ, և որ կոնֆլիկտներն են հանդիսացել հետազոտության առարկա: Պարզ չեն ներկայացված հետազոտության մեթոդների գրական աղբյուրները, իրականացման վայրն ու մեթոդների կիրառման լեզուն(որ լեզվով են դրանք օգտագործվել էջ 7-8, 100,101,102,103 և այլն):

2. Մեջբերումներում տեղ գտած աղբյուրները միշտ չէ, որ համընկնում են գրականության ցանկում տեղ գտած աղբյուրների հետ(էջ93,94,): Ներկայացված աղյուսակներում լիարժեք ներկայացված չեն փոփոխականների հայերեն թարգմանությունները: Եթե դասական վիճակագրական բանաձևերի տարրերի գրառումները նմանատիպ աշխատանքներում ընդունված են, ապա աղյուսակներում հայերեն ներկայացվող հապավումների բացատրությունները պարտադիր են, որը աշխատանքում չի նկատվում(աղ 3,4,5,6, և այսպես շարունակ, մինչև 14-ը ներառյալ:

3. Հաջորդը վերաբերվում է քննարկվող փոփոխականների նշանակելիության պարզաբանումներին և դրանց բովանդակային նշանակելիության պահանջներին, որոնք նույնպես անտեսված են: Ավելին՝ աշխատանքն ընթերցողի համար սկսած թիվ 8,9,10,11 աղյուսակներում տեղ գտած արդյունքների ընկալման, դրանց վերլուծությունների գործընթացը կապված է բավականին լուրջ դժվարությունների հետ: Շրջանառվող հասկացությունների, հապավումների ներկայացված բազմազան համակարգությունը հասկանալու և վերլուծական նյութը հստակեցնելու համար կարդացողը հայտնվում է հեղինակի կողմից արվող անորոշ դատողությունների խառնաշփոթում: Հաճախ դրանց միջև գոյություն ունեցող տրամաբանական կապերը գտնելու, դրանց իմաստը հասկանալու համար, ընթերցողը հայտնվում է ավելորդ փնտրտուքի, մեջ (127-128,129 և այդպես շարունակ):

Սակայն պետք է նշեմ, որ կատարված դիտարկումները չեն ստվերում ատենախոսության գիտական արժեքը, քանի որ ընդհանուր առմամբ աշխատանքը իր բովանդակությամբ համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին:

Եզրակացություն

Նաիրա Ալբերտի Սարհատյանի «Երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով ԺԹ.00.03 – «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքը իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և ՀՀ գիտպետկոմի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Նաիրա Ալբերտի Սարհատյանը արժանի է «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հավակնած գիտական աստիճանին:

Հոգեբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Մ. Մկրտումյան

Մասնագետի (Մելս Մկրտումյանի) ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտքարտուղար՝ Հ. Թադևոսյան

12.02.2026թ.